

Անհատի մարդկային, քաղաքացիական ու բնորոշական նկարագրի պրոբլեմը մշտապես հուզել, գրադեցրել է Մարո Մարգարյանին: Ավելին՝ «Բոլորն ուզում են աշխարհը ուղղել» շարքում նա անգիջում պայքար է հայտարարում ամնիխ ու աննպատակ օրեր վատնող մարդկանց դեմ, սուր խոսքեր է ուղղում նրանց, ովքեր գործում են եասսիրական նկրտումներով: Զգգալով, որ դրանով իսկ կորցնում են շատ թանկ բաներ, «քանդում են բոլոր ճանապարհները» իսկական երջանկություն փնտրելիս: Այդպիսի մարդիկ, հաստատում է բանաստեղծուհին, չկասկածելով իրենց ճշմարտացիությունը՝ դեռ հավակնություն ունեն օրինակ դառնալ ուրիշների համար և «աշխարհն ուղղելու» ջանքերի մեջ իրենց փորձը դարձնել ուղեցույց:

*Բոլորն ուզում են աշխարհը ուղղել,
Ոչ ոք չի ուզում սկսել իրենից.
Տալիս են անվերջ
Իմաստոտն դասեր,
Խորհուրդներ խորին,
Իրենից բացի, մյուս բոլորին...':*

Մ. Մարգարյանի բարոյական կարգախոսը հեռու է նեղ, սուբյեկտիվ մտահայեցողությունից. «Նստախոս եղիր նախ ինքդ քեզ հետ», կյանքը, ավա՜ղ, չափազանց կարճ է, մի ավարտիր այն «անհուր, անխմաստ», անգին օրերդ մի մատնիկ «խենթ քամիներին... ջուրը մի թափիր քիչ ունեցածից»:

Նույն խնդրի հետագծով Մ. Մարգարյանը ծանր խոսքեր է ասում չնչին շահերի գերի անձանց հասցեին՝ լինեն դրանք կեղծ հերոսներ, սուտ սրբություններ, թե իրենց մահատակի տեղ վաճառողներ։ Ինչպես ինքն է խոստովանում՝ «սիրտը խորքից ճաք է տալիս», երբ տեսնում է անբարո ու անմարդկային երևույթներ ու կամենում է իր փոքրիկ սրտով այս մեծ աշխարհի վերքերը դարմանել։ Նրան խորթ են մեծաշառաչ ու բարձրագույ բառերը, հոգնել է փուչ խոսքերից, դատարկ ցույցերից, մախրմտորում է այն սերն ու մտերմությունը, որը թող արտաքին փայլ չունենա, սակայն խորքում ջերմ, անկեղծ ու մտերիմ լինի։ Հեշտ է դրսից շատ լավ ցուցադրել իրեն, լավ երևալ, բայց խիստ դժվար է «մի քիչ լավ լինել»...

Եթե դժվար ես անցել քո ուղին,
Ռհերմն ճամփադ ազնիվ է եղել:
...
Էլ մի վիատիոր,
Քեզ մի նախատիր անգործության մեջ.
Մի թափիր վրադ մեղքերի հեղեղ:
Պարզապես ուղիդ
Անցել ես ուղիդ... (էջ 167)

Իրականության շատ տխուր երևույթների անդրադառնալով, չարի ու տմարդի արարքների բանաստեղծական պատկերներ ներկայացնելով հաճախ՝ Մ. Մարգարյանը ամենևին էլ չի համգում կենցաղագրության, տուրք չի տալիս նատուրալիզմի կամ մերկ փաստագրության: Նրա բարոյախոսությունը մարդու անադարտ նկարագրի, ազնիվ արարքների ու զեղեցիկ ապրելու փիլիսոփայությանն է դավանում, լույսի ճառագայթով մութը խլացնելուն, անհատի կարոտները բավարարելուն: Իսկ այդ կարոտների կիզակետը նորից ու կրկին զեղեցիկ անհատն է, որով հեշտ է ջնդրունել արևածագը, դուրին է անդունդը փակել, շտկել ծուռը: «Մութը ճաքել է մի ճառագայթով», «Մտահոգ դեմքեր», «Հարևանիս», «Ի հեճուկս», «Լավ երևալ ջանացող», «Մեծամունների մեծագոր ցանկում» և այլ երգերի մեջ Մ. Մարգարյանի բարոյաբանական դավանանքը արդիական հնչելություն է ստանում հատկապես այսօր, երբ շատերը, մի զարմանալի ջանադրությամբ, մոռանալով կամ անտեսելով հոգևոր արժեքները, ամեն ինչ նժարում են նյութականով և, խտրություն չդնելով միջոցների մեջ, ոտնահարում են բարոյական ու մարդկային ամեն մի չափանիշ: Նրանք ծոռում են իրենց հոգին, «հազար տեսակ գույներ փոխում» իրենց նպատակին հասնելու անսանձելի մղումով: Կարծես այս օրերի մասին են գրված Մ. Մարգարյանի հետևյալ տողերը.

¹ Տե՛ս Մ. Մարգարյան, Օրերի խորքից, Ե., 1965, էջ 126: Այսուհետև բանաստեղծությունների եղումները տրվում են չարադրանքին կից՝ փակագծերում նշվելով էջը:

Ինձ խենթացնում է մարդկային ոգու
Ոլոր մոլորը,
Որ արդեն մոլի չափեր է առնում:
Երեխայի պես մթազնած ամբողջ
Խոցվում եմ խորը
Քայլելն օրեց-օր դժվար է դառնում... (էջ 172)

Այսպիսի խոստովանանքների հաճախ կարելի է հանդիպել Մ. Մարգարյանի պոեզիայում, քանզի նրա համոզմամբ՝ պոետը ժամանակի զարկերակը միշտ բռնած պետք է ստեղծագործի և ինքն էլ հետևողականորեն ու անճահանջ երբեք չէր շեղվում այդ սկզբունքից։ Արվեստագետի կոչումն ու առաքելությունը տեսնում էր դրա մեջ։ Ճշմարիտ բանաստեղծը ժամանակի ձախ ու ծուռ ճանկաներում պետք է ազնիվ ու անթեք պահի իր երգը, «ճառագայթի պես ուղիղ ու շիտակ»։

Ուղիղ գծով գնա իմ երգ,
 Իմ ուղղախոս,
 Իմ ուղղասեր,
 Իմ անսպասելի, իմ անեզերք:
 Անբություններն ամեն տեսակ
 Ուղիղ սյունն է պահում կանգուն.
 Դու մի ծռված
 Տառ չունենաս
 Քո մի տողում,
 Քո մի հանգում:
 Բոլոր հաշվով ծուռ հանգերին,
 Չնգոցներին ու զանգերին,
 Փառքով փրված ու «թանկագին»
 Ի հեծուկըս,
 Ի հեծուկըս... (էջ 173-179)

Իմիջիայլոց, Մ. Մարգարյանը բավականին ժամանակ է տրամադրել նման «փքված» ու «թանկ», միանգամայն անարժան ձևով «մեծանունների մեծագոր ցանկում» գրանցված հեղինակներին, ինչպես ասում են՝ իրենց տեղը դնելու, նրանց ապաշնորհությունը ծաղրելու գործընթացում։ Նրա երգերի փոքրիկ մի շարք՝ «Անանուն տաղանդ» խորագրով, հենց այդպիսիների դիմակները պատռող, նրանց խավար ու վնասակար էությունը մերկացնող, երգիծական որոշակի խայթերով բնութագրական բաժին է։ Տիպեր են դրանք՝ «հանճարներին մի օրում ծալող», ամեն պատ ու պատմեջ հեշտությամբ հաղթահարող, հավերժ արթուն ու դարանակալ, որոնք գիտեն նախ տեղին ու ժամանակին քծնել, ծամածոյվել, հարմարվել։ Անկեղծ սեր ու ժպիտ անկարելի է սպասել նմաններից, իսկ դաժան հարվածներ թիկունքից, բիրտ հարվածներ, անակնկալ վշտեր՝ կարող են հասցնել ամեն պահի։ Միշտ խոնարհվող, թեքվող, բեկվող մարդկանց Մ. Մարգարյանը զարմանքով հարցնում է. ինչպե՞ս եք կարողանում «առանց շիկնելու ձեր որդու արդար աչքերին՝ նայել» կամ ի՞նչ եք ասում ձեր աչքերին նայող որդուն։

Մ. Մարգարյանի բանաստեղծությունները չեն ծնվում անակնկալ ու հենց այդպես՝ թեթև գրչի շարժումով: Մպասված ու կենսական զրույց էր բացում նա ընթերցողի հետ՝ իր ասելիքի հիմքում ունենալով ժողովրդական ակունքներից եկող խոսք ու խորհուրդը, որոնք բխում էին օրերի պահաճցներից, ժամանակի մտահոգություններից: Ինչ մտահոգացումներ էլ ծնվում էին բանաստեղծուհու մոտ, ինչպիսի թեմաների էլ ձեռնարկում էր՝ մարդու երջանկության, անհատի ազատ ու անկաշկանդ ձգտումների գաղափարներով էին շաղկած և իրենց հուզական կտրվածքով միտված էին կեցության բարի ու գեղեցիկ դրսևորումներին, դիմաց հաստատմանը: Կյանքը՝ առաջին Մ. Մարգարյանի բաղձալի անուրջների «հանգչող երազ» է, օղորդ պակաս, շնչելը՝ դժվար: Այն շարքերում ու բանաստեղծություններում, իսկ դրանց թիվը ամենևին էլ քիչ չէ, որոնք շոշափում են կնոջ՝ ճակատագրի, նրա զգացումների հարուստ, բայց հաճախ փակ աշխարհի առեղծվածները, մշտապես առկա են հոգու բեկբեկումները, տազանայներն ու անհանգստությունը, որովհետև հեղինակը տեսնում, խորապես զգում է փորձությունների անխուսափելիությունը, մեծ ձգտումների ու իրական հնարավորությունների ներհակությունը, այն խութերն ու պատնեշները, որոնք շարունակ ծառանում են հոգի ու ձգտում ունեցող անհատների առջև: Ըստ որում՝ Մ. Մարգարյանը չի ելնում սուբյեկտիվ ինչ-ինչ մանր փաստերից ու երբեք մեծ կիրք չի

հայտնաբերում այնտեղ, ուր դրա կարիքը չկա: Նրա երգերում բանաստեղծական փաստը ընդհանրա-
կան հիմք ու արժեք է ստացել, կիրքը շիկացումով արտահայտվել առանձնապես կարևոր խնդիրների
գեղարվեստական ընդհանրացումներում: Ու հաճախ Մ. Մարգարյանը ազգային հոգևոր ակունքների
ավանդույթներից է գնում դեպի այդ ընդհանրացումները՝ հավելելով դրանց նաև իր բարոյաբանական
ընկալումներն ու ըմբռնումները:

Բոլոր պարագաներում՝ աշխարհի խոչ ու խութերից անկախ, հաստատել կյանքը, ցույց տալ
կյանքի գեղեցկությունը և այդ գեղեցկությանը ոգեկոչել մարդուն, սատարել նրա երազանքներին, թև ու
թռիչք տալ նրան, - սա է Մ. Մարգարյանի գեղարվեստական հավատամքը: «Հոգնել ես, իմ սիրտ» շար-
քում այս հավատամքի դիտարկյունն է դառնում երբեք ծանր ժամանակներում վայր չդնել գրիչը, չնա-
հանջել ու մնալ դիրքերում:

Հանուն մարդկանց, որոնք դեռ
Թանկ են ու շատ սիրելի....

Չլինել անփույթ ու ծայրահեղ, վառել ներքին ողջ կրակները, լցվել հույսով ու հավատով, ու ինչ
սահմանված է քեզ վերուստ՝ արժանի լինել դրան.

Քեզանով նշիր
Քո ժամանակը,
Կնքիր ալեծուխ
Այրվող սերերիդ
Գեղեցկությունը
Օրերի վրա,
Մեղմիր անհատակ
Քո հոգու տաքով
Խստությունն օդի
ԵՎ եղանակը,
ԵՎ տուր աշխարհին
Երգերդ բարի,
Շքեղ ու շռայլ... (էջ 195)

Պոեզիան Մ. Մարգարյանի գեղարվեստական համակարգում լույսի անցամաք ու շռայլ աղ-
բյուր է և իր ազնիվ, ամուր, հաստատուն ու պայծառ որակներով մարդուն տանում է դեպի բնական
ու բանականը: Իր քնարակաճ խառնվածքով բանաստեղծուհին կարողացել է լուծումների մեջ գտնել
նաև դրամատիկ - արտահայտչական այնպիսի երանգներ, ստեղծել այնպիսի մթնոլորտ, ուր քնարա-
կան- հուզականը և դրամատիկ շիկացումը հաճախ մեկտեղվում-միախառնվում են և ստեղծագործու-
թյանը հաղորդում լավատեսական կենարար շունչ:

ԵՎ երազներիդ
Հրթիռները շեկ
Նետիր սլացող
Ժամանակներին,
Հասկացիր խորունկ
Իմաստը դերիդ.
Վրիպումների
Համար հարկադիր
Ինքդ քեզ ներիդ,
ԵՎ մի տար քամուն
Շիկացումներիդ
Սլաքները կեզ:
ՈՒնկ դիր հոգեբուխ
Քո որոտումին,
Եվ հավատա քեզ... (էջ 195-196)

Հայ պոեզիայի լավագույն ներկայացուցիչները անհատի պաշտամունքի տարիներին խորապես
ապրել են մարդ-անհատի ճակատագրի ողբերգական և սոցիալական ու հոգեբանական այն ճգնաժա-
մը, որ տեղի էր ունենում իրական արժեքների ոտնահարման ու անտեսման պատճառով: Փոխվում ու
եղծվում էր ոչ միայն անհատի, այլև հասարակության դիմապատկերը, կորսվում էին չափանիշները
կյանքի բոլոր բնագավառներում: Մտալիների չարատեսիլ անձի սարսափը այնքան էր ուժեղ, որ անգամ
նրա մահից (1953) ու կոմունիստների կուսակցության 20-րդ համագումարում նրա պաշտամունքը դա-
տապարտելուց հետո (1956) դեռևս երկար տարիներ հասարակական գիտակցությունն ու պրակտի-
կան հին ինքնազնայով շարունակում էին կեցության ու զաղափարաբանության ոլորտներում ասպրել ու
շարժվել նույն կերպ, հին չափումներով: Այս երևույթի դեմ էր ծառանում Պարույր Մկալը «Մարդը ա-
փի մեջ», «Եղիցի լույս» ժողովածուներում՝ ժամանակի շեղված ընթացքը գեղարվեստորեն ընդհան-
րացնելով և մարդու խեղված հոգեբանությունը լույսով մաքրագործելու պահանջով: Նույն «պահան-
ջատիրության» ակոսներով էին ստեղծագործում Համո Սահյանը, Միլվա Կապուտիկյանը, Վահագն
Դավթյանը, Գևորգ Էմինը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ: Նրանց երգերի մոր շնչառությունը
հենց հնարավորություն տվեց հեղինակներին բացվելու ամբողջ տաղանդով, երևալու իրենց իրական
որակներով և հայ պոեզիան անմիջականորեն մերձեցնելու համամիութենականի ու համաշխարհային
բարձունքներին:

Մ. Մարգարյանն իր գրչակից բանաստեղծների շարքում, առաջիններից ու առավել ակտիվնե-
րից մեկն էր, որը՝ ամենայն սրությամբ էր զգում ժամանակի կորուստների գինը և այդ պատուհանից
գնահատում իրենց սերնդի բացթողումները.

Կարենայինք մենք ամեն ինչ
Ժամանակին գնահատել,
Կարենայինք
Փուչ անպետքից լավը գատել,
Լավն ազատել
Կարենայինք.
Փակ աչքերով չգնայինք
Մի սխալից դեպի մեկը,
Չթողնեինք ուղիղ ճամփան
Ու չընտրեինք ծուռն ու քեքը... (էջ 197)

Անչափ դժվար է պատմության խաչածև ոլորաններում անսխալ ու անսալթաք ճանապարհ անց-
նելը, հատկապես այնպիսի դժնդակ քառասյին շրջանում, ինչպիսին ստալինյան բռնատիրության
տարիներն էին: Մ. Մարգարյանը գիտի պատմության այդ փորձերը և «Ասեմք սխալ ո՞վ չի արել, ո՞վ է
կյանքն իր անթեք տարել» հարցերը հոռետորական ուղղությամբ չի տանում, այլ փորձում է պատաս-
խան գտնել մարդկային բարոյական ճշմարիտ զգայնաչափերի կշիռներով. սխալ ճամփան պետք է
ժամանակին ուղղել, մեր մեղքերն ու արատները ուրիշներին չփաթաթել, մեր անհոգի քայլերի համար
նախ մեզ մախատել և մեր մեջ որոնել պատճառները.

Կարենայինք չկորցնել
Մեր մեջ եղած վեհն ու թանկը,
Թանկ պահեինք այսքան գորովն,
Այսքան ուժերն,
Այսքան ջանքը,
Որքա՞ն պիտի շահեր կյանքը
Կարենայինք: (էջ 198)

Այս հարցում Պրոֆ. Մկալ Արզումանյանը տվել է հետևյալ դիպուկ բնութագիրը. «Ստեղծագոր-
ծական կյանքի առաջին իսկ տարիներից Մ. Մարգարյանը հետամուտ էր քննելու բանաստեղծների
համար բոլոր ժամանակներում էլ մտահոգիչ այս գերագույն առեղծվածը.

Ինչո՞վ է այրվում մարդը աշխարհում,
Ինչո՞վ է արդյոք մարդը բախտավոր...

Մա կարող է բնաբան լինել առհասարակ բանաստեղծուհու ողջ ստեղծագործությանը, անցած գրական ճանապարհին, քանի որ հստակորեն արտահայտում է նրա գեղարվեստական հավատամքը: Կես դար շարունակ Մ. Մարգարյանի պոեզիան եղել է լավի ու բարու որոնում, մի խոսքով, կարոտի ու հավատի լուսավոր կանչ²: Իսկապես, կարոտն ու հավատը եղել են Մ. Մարգարյանի բնարերգության լուսավոր ջահերը, որոնք շարունակ վառ են պահել նրա երգերի կենսական պաթոսը, անգամ այն ժամանակներում, երբ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, իր բառերով ասած՝ «ցրտեր են եղել»: «Մտերմություն» (1940) և «Բանաստեղծություններ» (1945) անդրանիկ ժողովածուներով հաստատեց, որ շարունակելու է հայ դասական պոեզիայի գեղեցիկ ավանդությունները, մնալու է հավատարիմ ազգային արմատներին: Դժվար էր համատարած ներքողայնության, գրական սխեմատիզմի ու մերկ հռետորականության պայմաններում տուրք չտալ ընդհանուր մթնոլորտին, չունենալ նահանջներ ու սայթաքումներ: Դրանք էլ եղել են Մ. Մարգարյանի ստեղծագործական ճանապարհին: Մակայն, ի պատիվ բանաստեղծուհու, նրա գեղարվեստական համակարգում իշխողը մնաց նուրբ ու անկեղծ հույզը, աշխարհի քնարական ընկալումը՝ այնքան ներդաշնակված ներհույս խոհականությունը: Իրավացի է իր դիտարկումներում ռուս բանաստեղծ Դավիթ Մամոյտովը. «Մարտ Մարգարյանը չի վազում արտաքին տպավորության և հաջողության հետևից, նրան իր պարզ ու բնական ընթացքով սիրել է հայ ընթերցողը, այդպես էլ գիրք-գրքի հետևից հասնում է ռուս ընթերցողին ու նվաճում նրա սերը»:

Մարոն իսկական լիրիկ է. նա բացառիկ ձիրքեր ունի բանաստեղծական անկեղծությամբ. նա կարողանում է պարզ, հասարակ զգացումների մեջ բացել ամհայտ, անծանոթ խորքերը. նա կարողանում է իր ասած բանաստեղծական խոսքին տալ իր անհատականության անկրկնելի մեղմությունն ու հմայքը³:

Երբեք չտարվելով վերացական ու անհող զգացումներով՝ Մ. Մարգարյանը, շնորհիվ համառ ու տևական որոնումների. կարողացել է իր ապրումներին հաղորդել այնպիսի երանգներ, այնպիսի գույներ ու գծեր, որոնք արտահայտում էին ժամանակի ոգին, հասարակական տրամադրությունների ուղղվածությունը: Տարիների հետ նրա թեմատիկ նախասիրությունները հղկվեցին ու բյուրեղացան, քնարականությունը չնվազեց, իսկ քաղաքական պաթոսն ու բովանդակությունը խորացան՝ ստանալով սոցիալական, էթիկական ու մարդկային առավել շեշտվածություն:

Պոետիկայի ու թեմատիկ նախասիրությունների հետևողականությամբ, գեղագիտական հավատամքի կայունությամբ Մ. Մարգարյանը զարմանալի բացառիկ անհատականություն է:

Զննելով ու վերլուծելով հասարակական զարգացման արդի միտումները և ամեն քայլափոխի հանդիպելով այդ զարգացումը խաթարող հակաքարոյական գործողությունների՝ Մ. Մարգարյանը սուր էր պահում գրիչը՝ ձաղկելու մարդկային էգոիզմը, ընչաքաղցությունը, օրեցօր խորացող դաժանությունը: Պետք է կանխել չարիքը երբ և որտեղ էլ արտահայտվի, ինչ կերպ ու ինչպիսի դրսևորումներ էլ ունենա: Բանաստեղծուհին հավատում էր գեղարվեստական գրականության ներագրեցության ուժին, համոզված էր, որ պոեզիան մարդկային ու հասարակական գիտակցության վերանորոգիչ հզոր լիցքեր ունի, և անհրաժեշտ է կրթոտ ու անգիջում պայքար մղել չարիքի դեմ: Սոցիալական անարդարությունները, մշտապես իր դեմքն ու գույնը փոխող բյուրոկրատը, հոգևոր ու բարոյական արժեքների կորուստը այնպիսի չափեր են ընդունել, որ ուղղակի սպառնում են վերաճել հասարակության «էկոլոգիական քաղցի»: Դրա համար էր Պարույր Մևակը առանց երկնելու, առանց զգուշավորության, մարդու դիմանկարի մեջ առանձնացնում է հատկապես այն գծերը, որոնք բնորոշ էին «բյուրավոր ու բյուրատեսք բութ ու սուտ հավատացյալներին» և աննահանջ կռիվ հայտարարում նրանց դեմ:

Ե՛վ ոչ մի գավթում մի ընդունեցեք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացված է:
Մերժեցեք նրանց զոհն էլ խոստացյալ,
Որ... զոհ չգնա ինքը հավատը՝
Մաքուր-վսեմը,
Անկեղծ-ամսուտը:⁴

Նույն հավատի դիրքերից էր Մ. Մարգարյանը կրկին ու կրկին երգում-վերերգում բարին, գեղեցիկը, մաքուրն ու վսեմը: «Մեր հասարակական կյանքի վերջին երեք տասնամյակի տեղաշարժերը խոր արձագանք են ստացել Մ. Մարգարյանի պոեզիայում, - գրել է գրականագետ Սևակ Արզումանյան:

² «Երեկոյան Երևան», 1986 թ., 15 նոյեմբերի:

³ Նույն տեղում:

⁴ Պարույր Մևակ, Երկերի ժողովածու, հ. 2, 1972, էջ 7:

նր: Նա զգաստ հայացքով զննում է երևույթները, արտահայտչական ինքնատիպ միջոցներով վեր հանում կյանքի ծուռն ու թերին: Նրա խոհական-քաղաքացիական երգերում անկեղծ ցավի ու հավատի կանչեր կան, անգամ ճիշ. ցավն ու հավատը միասին, կորուստներն ու որոնումները մժար-մժարի: Մի շարք բանաստեղծություններում Մ. Մարգարյանը իմաստավորում է իր սերնդի հերոսական ու դժվարին ճանապարհը, գեղարվեստական պատկերը կառուցում մարդ-ժամանակ հարաբերության վրա⁵:

«Հոգնել ես, իմ սիրտ» շարքում նուրբ ներսուզումներով Մ. Մարգարյանը ինքնաքննությամբ բացահայտում է այն չարչարող հարցերն ու պատասխանները, որոնց խորքում ակնառու են դառնում նաև մեր սայթաքումների, կորուստների ու անկումների պատճառները: Դրանց հետևանքով չէ՞, որ պատեր են փլվում, տներ ու տանիքներ կործանվում, երազներ խորտակվում:

Հոգեբանական բարդ անցումների, սուր ապրումների և դրամատիկ լարվածության մեջ է գտնում իրեն բանաստեղծուհին, երբ փորձում է ամհատի հոգին քննելով պարզել անքննելին ու անհասանելին: Իր խտացված բարությունից, ուրիշի ցավը կրելու հոգսից ներքին խաղաղությունը կորցրած՝ նա փաստորեն դառնում է սեփական տառապանքի պատճառը՝ այդ կերպ գտնելով հանգստություն ու հոգու խաղաղություն:

Փրկություն չկա
Ինքդ քո դեմ լարած
Դժոխսից ու դավից
Փրկություն չկա:
Խաղաղ քու՜ չկա
Քո ներսում վառած
Ափսոսանքի ցավից,
Խաղաղ քուն չկա:
Ո՞վ կարող է քեզ
Այսքան սուր դատել,
Այսպես հասկանալ,
Այսպես նախատել
Ե՛վ բծախնդիր,
Ե՛վ թափանցող
Զգալ այսքան խոր,
Հսկել այսքան խիստ
Ե՛վ պատժել այդպես՝
Ինչպես դու քեզ: (էջ 125)

Այս բանաստեղծության մեջ ևս («Անքնություն») ուղղակի ճառագում է Մ. Մարգարյանի բարությունն ու հումանիստական աշխարհընկալումը՝ հոգու մեջ ամփոփած ուրիշի վիշտը, նրան հասկանալու զգացումը, որովհետև իր ներսում են վառած այն «լապտերները», որոնցով լուսավորվում են մարդկանց և՛ ցավը, և՛ «դժոխսն ու դավը»:

Զգտում է միշտ լավը տեսնել մարդկանց մեջ, նրանց պատկերացնում է «լույսոտ, ծիածանոտ», որոնք կարող են աստղագծել յուրաքանչյուր քայլ, կարոտների ու սերերի շռայլ շողեր կշաղեն: Խնդություններ կմաղեն ամենքի վրա («Մեր զավակները»): Արդար կլինի ասել, որ Մ. Մարգարյանը «արդար ու բարի արևի» ըղձավոր է: «Մի ուրիշ ամհայտ մոլորակից» շարքում բանաստեղծուհու երազը պատվում է այն մարդկանց շուրջ, ովքեր առանց խաղախտումների, առանց դրժումի, դավի փնտրում պտտվում են սեր ու կարոտ, որոնց սիրտը մխում է կորած գեղեցիկ հնչյունի համար և կայծակում է խուլ հեռուներում փայլատակող պայծառ երգի տողից: Համենայն դեպս՝ նա այդպես է տեսնում պոետի ու պոեզիայի առաքելությունը՝ որտեղ և ինչպես էլ լինել. «Փեկուզ մի ուրիշ տիեզերքից»-զգալ ցավը միացող հոգու:

Գուցե մենք էլ մեկ-մեկ միայն
Թափառում ենք աստղերի պես
Երկինքներում խորունկ ու լայն
Ու թռչում ենք անհայտներում,
Ու խառնվում թեկուզ մի պահ
Լուսեղների բարձր դասին:
Ե՛վ մեր բարի երազներն են

⁵ «Հայաստանի աշխատավորուհի», 1985, թիվ 12, էջ 7:

Հաղորդումներ տալիս անկապ
Մեզ այդ մասին,
ԵՎ կարոտներն՝ անմեկնելի
Մեր արյան մեջ,
Որ դժկար ենք մեկ-մեկ տանում,
ԵՎ մորմոքներն այն անառիթ,
Որոնք հաճախ
Չենք հասկանում : (էջ 137)

Ըստ էության՝ «Մի ուրիշ, անհայտ մոլորակից» շարքը ներկայացնում է Մ. Մարգարյանի բանաստեղծական ուստոպիան, որով փորձում է միս ու արյուն հաղորդել իր երագներին: Իսկ այդ երագներում նա երևակայում է հեքիաթային մի աշխարհ՝ շքեղ ու հարուստ գույներով, ուր մեր ծոռները «կվերծանեն պատմությունն իրենց ապ ու պապերի»: Բանաստեղծուհին փորձում է իրար շաղել ուստոպիականը իրականի, երևակայականը՝ առօրեականի հետ: Ո՞վ իմանա, հարցում է անում նա՝ մի խոհուն համոզմունքով, թերևս այդ հեքիաթայինը պայմանավորված է մեր ու մեր օրերի շնչառությամբ, այս ժամանակների հեքով, մարդկային տենչերի, ուրախությունների ու տխրությունների ալիքներով: Պատահական չէ, որ այլ մոլորակների պտույտներում, սլացքների ու թռիչքների պահին արձակած ռադիոալիքների մեջ Մ. Մարգարյանը նորոգում է «մեր մորմորը հին»՝ արդեն տիեզերական հարց դարձած: Նա կարծում է, որ այդ դեպքում կլսեն մեզ, կզգան մեր սրտերի ռիթմերը գաղտնի:

«Սի ուրիշ, անհայտ մոլորակից» շարքի բանաստեղծությունները կապվում ու լրացնում են միմյանց մտապահման միասնությամբ, գաղափարական ամբողջությամբ ու գեղարվեստական հնչեղ երանգներով։ Ասես սյուժետային մի գիծ, ներքին տրամաբանությամբ, իրար հյուսելով շարքի երգերը՝ ընդհանրացնում է հեղինակի գեղարվեստական նպատակադրումը՝ ստեղծել ուտոպիականի կենդանի պատրանքը։ Եվ պատկերվում են հեքիաթային այդ իրականության տեսիլքները՝ ոսկեգիսակ աղջիկներ, որոնք խումբ-խումբ աստղահյուս կողովներով շաղ են տալիս ոսկե բռնակներով աղամանդե գործիքներ, որոնցով պետք է արեգակնային կայաններ կառուցեն ու աստղալարեր քաղեն մոլորակից մինչև մոլորակ։ Ամեն ինչ այդտեղ ողողված է սիրով, ծափ ու ծիծաղ են շուրջ բոլորը, խնդության կանչ ու կարկաչ։ Շարքն ավարտվում է ուտոպիական այդ աշխարհի ու մեր հողագնդի ընդգծված հակադրության պատկերով, որի բարոյաբանական կարգախոսը դարձյալ լավի, բարու, գեղեցիկի հաստատումն է. ինչու՞ են հողագնդի մարդիկ այդպես դաժանորեն աղքատացնում իրենք իրենց, ինչու՞ են անհաշտ, հնարավոր չէ իրենց գլխին չդիգեն այդքան ծանր ու դժվար հարցեր, անլուծելի խնդիրներ, «ինչու՞ են ջնջել գույներն իրենց հոգում, այսքան շքեղ, այսքան ընտիր»։

Արևի տենչամբը, ալիներգությունը, որ հայ դասական պոեզիայի հաստատուն ավանդույթներից է ու փոխանցվելով հաջորդ սերունդներին՝ հասել է մինչև ժամանակակից պոետներին, Մ. Մարգարյանի ստեղծագործության մեջ կայուն հիմքեր ունի՝ կապված նրա աշխարհայեցողության ու երևույթների ընկալման հետ:

«Կանաչ, կարմիր երգ» փոքրիկ շարքում, որը հասցեագրված է մանուկներին, Մ. Մարգարյանը կրկին «որոնում» է «Նոր մոլորակներ» -«երջանկության աստղե ճամփաները» գտնելու համար: Կյանքի մշուշների մեջ բանաստեղծուհու կարոտները ելք են փնտրում, ու նա համոզված է, որ «կգտնեն անշուշտ»: Այդ համոզմունքով է նա «կանաչ, կարմիր երգեր» վառում մանուկների համար, որ նրանք հեռավոր աշխարհների երազանք ունենան կյանքում և վաղվա երջանիկ օրվա բաղձանք ու հավատ:

Վարդան Գրիգորյանի երրորդ պատմական վեպը լույս տեսավ 1988-ին ու դարձավ նրա կարապի երգը: Վեպը կոչվում էր «Մանյա այրք»¹: Բավականին երկար էր աշխատել այս ստեղծագործության վրա և առաջին տարբերակը, որ լույս էր տեսել «Գարուն» ամսագրում, խորագրված էր «Լույս և խավար»:

[illegible]

Փիլիսոփայական վերացարկումներ չեն սրանք, ոչ էլ անհող խորհրդածություններ: Ժամանակի մարդկային-հասարակական մակընթացությունների և տեղատվությունների իրական պատկերներ էր, ճշգրիտ բնությանգրությունը, որը հիմք է դարձել Վ. Գրիգորյանի՝ համար գեղարվեստական-հոգեբանական զարգացումներով ազգային քաղաքական ուղղվածություն տալու «Մանյա ալոր» պատմավեպին:

¹ Ա. Ասիհնյան, Վարդան Գրիգորյանի պատմավեպը, Ե., 1997, էջ 124:

² Հարդան Գրիգորյան, Մանյա Այրք, Ե., 1988:

³ Տե՛ս «Գրական թերթ», N 16, 1985: